

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.15-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. 2011 թվականին սերմնաբուծության զարգացման ծրագրով մարզի հողօգտագործողներին հատկացված առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմերի ցանքերի վիճակի մասին մարզի համայնքներից ստացված տեղեկատվությունն ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հովհաննիսյան Վ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, նախագահ

Գրիգորյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի վարիչ

Բաղդեյան Ռ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Մելքոնյան Վ. - ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գեղարքունիքի ԳԱՄԿ ՓԲԸ տնօրեն

Հանձնաժողովի աշխատանքներին ներգրավել մարզի համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ /համաձայնությամբ/:

2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրության արդյունքները 5-օրյա ժամկետում ներկայացնել մարզպետարան:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ